նով են կոչում, որ ցոյց են տալիս այդ ցեղի բացատական, դրական կողմը, ծագումը, պարապմունքը և այլն[1]։

Այս հիմամբ Սասմանց տունը, կամ Սասմայ ծոները, որ և մեծ մասամբ դլխաւոր երկու դիւցազների Դաւթի և Մհէրի[2] անունով է կոչւում, պէտք է համարել նորագոյն ձև. նախ շատ բնական է այդ ձևը, ինչպէս որ կայ Իլիական քաղաքի կամ միջնաբերդի անունով և Ոդիսական՝ դիւցազնի։ Մեզ թուում է, որ այդ վէպը Սասունի հռչակ ստանալուց յետոյ է Սասմանց տուն, Սասմայ ծոներ և այլ նման անուններ ստացել. իսկ նախնական ժողովրդական կոչումը եղել է Զոջանց տուն։ Եւ երբ որ մենք համոզուեցանք, որ Քաջանց տան վէպի հրատարակուած երեք փոփոխակները Արշակունեաց վէպն են, որոնց մէջ Քաջանց տուն, թագաւոր, և այլն մեր Արշակունիքն ու Դ. դարու թագաւորներն են, մանաւանդ որ Պապն էլ Քաջանց թագաւոր է կոչւում. ուստի մենք Արշակունեաց վէպը Քաջանց տան վէպ կոչելով՝ վստահութեամբ Մամիկոնեանց այս վէպը կոչեցինք ժողովրդական անունով Զոջանց տուն, որ պահել է միմիայն մի փոփոխակ։ № 9-ի պատմուածքի ընթացքում շարերից իմացւում է, թէ «Դաւիթ Զոջանց տնից է». «Դաւթի թոռ առնենք, Սասում չմնայ անտէր, տէր կենայ Զոջանց տան» (№ 9, էջ 373, 393)։ «Դաւիթ . . . կը դայ ջոջ Սասմայ տուն» (էջ 378), և «Սասման ջոջ տուն» գործ է ածուած եօթն անգամ երկու էջում (395—397)։ Թերևս և «Ըռըմիկ Զոջանիցն» և «Կիւրզիկ Զոջանիցն» (էջ 381—382 և 395) պէտք է հասկանալ Զոջանց տունը, որոնց ըռըմիկը՝ նիզակը և դիւրզը՝ վարզը հռչակաւոր պիտի լինէին անշուշտ, ոչ ապաքէն ստացողները դիւցազն Մամիկոնեաններն էին։

Ահա թէ ինչու պահելով՝ տարածուած Սասմայ ծոներ անունը դերադասեցի նախ և առաջ կոչել Զոջանց տուն։

§ 9. Մի քանի խօսք ևս կարևոր եմ համարում յայտնել, մեր երեք

---

1. Գ. Տէր-Աղէքսանդրեան, Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը. մասն Ա. էջ 226—236. Թիֆլիզ 1886. Տիգրան Նաւասարդեան. Հայ-ժողովրդական հէքիաթներ. Ժ. գիրք, էջ 76—83, Թիֆլիս 1903.

2. № 1 «Մհէրի դուռ» ճիշտ պարսկերէն Der-i-Mihr-ն է, որ նշանակում է դուռն Միհրի. Դեր-ի-Միհր կոչւում են մեծ զոհարանները (Spiegel, Eranische Alkerthumskunde, III, Զ. Բ. էջ 568). Եւ որովհետև Մհէրի դուռը, ինչպէս եւ Ակրիտասարը, ուր փակուել է Մհէր-Միհրը. Վանայ մօտ է (Գ. Արուանձտեան, Մանանայ Գ. էջ 58). ուստի մի նոր ապացոյց ևս աւելանում է մեր այն դիտողութեան վրայ, որ Վասպուրականը հնում միհրականութեան կենտրոն է եղել. Տես Զոջանց տան Պատմականը [Արարատ 1908. էջ 123—124 (49—50)].